



1. Ճամբաս Դուռ, Տեր, ընտրէ,
Թող ան խաւար չըլլայ,
Ձեռքովդ առաջնորդէ,
Ընտրէ ինծի ճամբայ:
Ես չեմ համարձակիր
Բընաւ վիճակս ընտրել.
Դուռ կառավարս եղիր,
Ուղղիչս՝ շիտակ քալել:

2. Խնդրած արքայութիւնս
Քուկդ է, ով Տեր իմ,
Քուկդ ալ ըլլայ շաւիղս,
Այլուստ կը մոլորիմ:
Դուռ որոշէ վիճակս
Անհուն իմաստութեամբ,
Առ և լեցուր բաժակս
Վիշտով կամ վայելմամբ:

3. Ընտրէ բարեկամներս,
Ախտերս, առողջութիւնս,
Փորձանքս ու հոգերս
Եւ կամ հանգստութիւնս:
Ինծի խոստմունք տուիր,
Որ ազատես չարէն:
Տէր, առաջնորդս եղիր,
Իմաստութիւնս, ամէն: